ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՇՈՒՐՋ

Արտակ Զաքարյան

Հոդվածում փորձ է արված դասակարգել ահաբեկչության մի քանի տարատեսակներ: Հետազոտվել են ահաբեկչության փոխակերպումները տարբեր ժամանակահատվածներում: Ժամանակակից ահաբեկչության էությունն ըմբռնելու համար անհրաժեշտ է հրաժարվել տարիների ընթացքում մշակված գաղափարախոսական և քաղաքական կաղապարներից, որոնք շատ նեղ և հաճախ ոչ ճիշտ պատկերացում են տալիս ահաբեկչության մասին:

Այսօր շատ հետազոտողներ ենթադրում են, թե աշխարհը սառը պատերազմից հետո թևակոխել է «հակաահաբեկչական պատերազմի» փուլ: Ահաբեկչության դեմ պայքարը գերակշռող աշխարհաքաղաքական նշանակություն է ձեռք բերել, ուստի ուսումնասիրություններն այս ոլորտում այսօր ավելի քան արդիական են: Մինչդեռ ահաբեկչությունը դասակարգելիս հաճախ հանդիպում են հակասական սահմանումներ: Հոդվածում կփորձենք համակարգել և մեկնաբանել այն դրդապատճառները, որոնք հանգեցնում են ահաբեկչական գործողությունների կազմակերպմանն ու իրականացմանը:

1. Քաղաքական ահաբեկչություն

Ահաբեկչության այս տեսակը ենթադրում է այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են քաղաքական, կուսակցական առաջնորդների, հասարակական գործիչների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև այս կամ այն երկրի ենթակառուցվածքի օբյեկտների դեմ՝ իշխանություններին ահաբեկիչներին ձեռնտու քաղաքական, օրենսդրական և այլ որոշումներ հարկադրելու նպատակով: Քաղաքական ահաբեկչությունը նաև կարող է առանձին վերցված երկրի պետական և հասարակական կարգը փոխելու նպատակ հետապնդել:

Քաղաքական ահաբեկչությունն ունի աջ, ձախ, ազգային, ռազմատենչ (միլիտոկրատ) և կրոնական տարատեսակներ: Որոշ հետազոտողներ, ինչպես, օրինակ, Մ.Վասիլիկը և Դ.Օլշանսկին, կրոնական ահաբեկչությունը համարում են ահաբեկչական գործունեության առանձին տեսակ: Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ կրոնական ահաբեկիչներն իրենց առջև նպատակ են դնում վերափոխել պետությունն ու հաստատել իրենց կրոնական պատկերացումներին համապատասխան աշխարհակարգ, ինչն էլ հիմք է տալիս այն քաղաքական ահաբեկչության տեսակ համարելու համար:

Աջ ահաբեկչությունը քաղաքական ահաբեկչության տեսակ է, որի

նպատակն է ստեղծել քաղաքական վարչակարգ, որտեղ վերացվում են քաղաքացիական իրավունքները, որոշակի պետությունում հաստատվում է միայն մեկ ազգի, ռասայի կամ սոցիալական խմբի անսահմանափակ իշխանություն՝ ի վնաս մյուսների: Եթե ավելի որոշակիացնենք, աջ ահաբեկչության գաղափարախոսությունը ռասիզմն է, ֆաշիզմը կամ նեոֆաշիզմը: Աջ ահաբեկչության էության և հետևորդների մասին խոսելիս հարկ է նշել, որ այն բնույթով խիստ պահպանողական է, իսկ ծայրահեղ աջերի համար կատարելատիպ է հանդիսանում կառույցով նացիստական Գերմանիան հիշեցնող պետությունը: Աջ ահաբեկչական կազմակերպություններում անդամների ընտրությունը կատարվում է խիստ կոշտ կանոններով: Ինչպես գրում է ԿՀՎ նախկին տնօրեն Վիլյամ Քեյսին իր «Ահաբեկչության զորահավաք» գրքում, «Աջ կազմակերպություններում գործում է ընտրության չափանիշների կոշտ համակարգ: Այդ կազմակերպությունների մարտիկները պարտավոր են խիստ աստիճանակարգություն պահպանել տարիքով և պաշտոնով իրենցից բարձր անձանց նկատմամբ, պետք է պատկանեն բուն ազգին և դավանեն ավանդական կրոնը» [1]: Այս խմբավորումների մարտիկներն իրենց թշնամին են համարում, ըստ իրենց, ավելի ցածր սոցիալական խմբերի ներկայացուցիչներին (գործազուրկներ, թմրամոլներ, հարբեցողներ, անառակներ, սեռական փոքրամասնության ներկայացուցիչներ, ոչ ավանդական մշակույթ ձևավորող երիտասարդություն):

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ծայրահեղ աջ մարտական ծայրահեղական խմբավորումները լայնորեն տարածվեցին Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Իտալիայում, Դանիայում, Նորվեգիայում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում, ինչպես նաև ԱՄՆ մի շարք հարավային նահանգներում: Դրանցում հատկապես հայտնի են այնպիսի ծայրահեղ աջ ահաբեկչական կազմակերպություններ, ինչպիսիք են «Աքսիոն Ֆրանսեզը» Ֆրանսիայում, «Ազնիվ արիական օրդենը», «Գերմանական ազգի սանիտարները», «Զեերվելդը» Գերմանիայում, «Մարտական հակակոմունիստական խմբավորումներն» Իտալիայում, «Ազգային-հայրենասիրական ջոկատը» Բելգիայում, «Կու Կլուս Կլանն» ԱՄՆ-ում, «Սպիտակ ծաղիկի լեգեոնը» և «Ճերմակամորթ ռասայի պահապանների բրիգադը» ՀԱՀ-ում, «Սիգվուդ Մեծի վեհանձն զինվորները» Նորվեգիայում, «Սվենեմյունդի եղբայրությունը» Դանիայում և շատ ուրիշներ:

Անցած հարյուրամյակի 80-ական թթ. սկսած՝ աջ ահաբեկչական կազմակերպություններն սկսեցին լուրջ հակահարվածներ ստանալ: Եվրոպայի լայնածավալ ինտեգրացիոն գործընթացների պայմաններում նացիստական գաղափարախոսությունն աստիճանաբար կորցնում էր ժողովրդայնությունը: Կտրուկ նվազեց նաև այդ կազմակերպություններին անդամակցել ցանկա-

ցողների թիվը: Չնայած այս ամենին, նացիստական կազմակերպությունները, ճիշտ է՝ մասամբ, բայց պահպանեցին իրենց կարգավիճակը Եվրոպայում:

2000թ. հունիսին «Զեերվելդ» ահաբեկչական կազմակերպության մարտիկների կողմից Դյուսելդորֆի քաղաքային մետրոյի կայարաններից մեկում, որի շրջակայքում գտնվող ձեռնարկություններում գերազանցապես օտարերկրացիներ էին աշխատում, ահաբեկչական գործողություն իրականացվեց: Հենց օտարազգի քաղաքացիների դեմ ուղղված ահաբեկչական գործողության արդյունքում հինգ մարդ զոհվեց, ևս տասներեքը վիրավորվեցին: Հաճախակիացան ահաբեկչական գործողություններն ու ահաբեկչական նկատառումներից բխող այլ հանցագործությունները (օտարերկրացի ուսանողների, աշխատավորների ու առևտրականների վրա կատարվող հարձակումներ և սպանություններ, ավերածություններ, գերեզմանների պղծում, այլ մշակութային հուշարձանների նկատմամբ վանդալիզմի դրսևորում):

Անհրաժեշտ է նշել, որ աջ ահաբեկչությունը ծավալվում է նաև նախկին Խորհրդային Միության երկրներում՝ Ռուսաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում, Բելառուսում: Ահաբեկչական կազմակերպությունների մեծ մասը համալրված է 15-25 տարեկան երիտասարդներով, ինչը մեծ վտանգ է ներկայացնում ամբողջ հասարակության համար: ԱՊՀ տարածքում գործող ամենահայտնի ահաբեկչական կազմակերպություններն են «Վեերվոլֆի լեգեոնը» և «88 բրիգադները» Ռուսաստանում, *«Браты за чистэ Молдову»-ն* Մոլդովայում, «Սև բազեները» Բելառուսում: Աջ ահաբեկչության սպառնալիքի պահպանմանը նպաստող կարևոր գործոններից են դեպի Եվրոպա և ԱՊՀ երկրներ արտագաղթի աճը, այսպես կոչված, երրորդ աշխարհի երկրներից և ԱՊՀ երկրներից բնակչության հոսքը դեպի Ռուսաստան, Բելառուս և Ուկրաինա:

Վերն ասվածը թույլ է տալիս եզրակացնել, որ աջ ահաբեկչությունը դեռևս լուրջ սպառնալիք է հանդիսանում աշխարհի շատ երկրների անվտանգության և ներքին քաղաքական կայունության համար:

Ձախ (կամ հեղափոխական) ահաբեկչությունը քաղաքական ահաբեկչության տեսակ է, որի նպատակն է պետության ընդհանուր կարգի վերափոխումը, ինչպես 20-րդ դարի 20-30-ական թթ. դա տեղի ունեցավ Խորհրդային Միությունում կամ Չինաստանում և Հարավարևելյան Ասիայի այլ սոցիալիստական երկրներում՝ 1960-70-ական թթ.:

Ձախ ահաբեկչությունը սկզբնավորվել է 19-րդ դ. երկրորդ կեսին, Ռուսաստանում: Այնուհետև քաղաքական ահաբեկչության այդ տեսակը տարածվեց նաև Ավստրո-Հունգարիայում և Գերմանիայում: Առաջին ձախ ահաբեկչական կազմակերպությունն ընդունված է համարել *«Народная воля»-ն* Ռուսաստանում, որին հիմնականում անդամակցում էին ուսանողները: Այն կազմավորվել է 1879թ. օգոստոսին: Այս կազմակերպության իրականացրած

ամենահայտնի ահաբեկչական գործողություններից մեկը Ալեքսանդր II-ի սպանությունն էր 1881թ. մարտի 1-ին [2]: 20-րդ դարում ևս ձախ կազմակերպությունները լայնորեն տարածված էին: 1907թ. սկսած և մինչև 1940-ական թթ. նման կազմակերպություններ ի հայտ եկան Բուլղարիայում, Սերբա-խորվաթա-սլովենական Թագավորությունում (հետագայում՝ Հարավսլավիա), Ռումինիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Իսպանիայում:

Անցած դարի 50-ական թթ. վերջից ձախ ահաբեկչությունը լայն տարածում է ստանում Եվրոպայում, Հարավարևելյան Ասիայում, Մերձավոր և Միջին Արևելքում, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներում: Առավել հայտնի ձախ ահաբեկչական կազմակերպություններն են. Իտալիայում՝ «Կարմիր բրիգադները», «Կարմիր բանակի խմբակցությունները», Գերմանիայում՝ «Կարմիր օղակները», «Գերմանիայի Կարմիր բանակը», «Կարմիր վանդակները», Ֆրանսիայում՝ «Աքսիոն դիրեկտը», Բելգիայում՝ «Կոմունիստական երիտասարդության ավանգարդը», Հունաստանում՝ «Նոյեմբերի 17-ի միությունը», Իսպանիայում՝ «Իսպանական ժողովրդի երիտասարդական ճակատը», Պաղեստինում՝ «Սև սեպտեմբերը», Պերուում՝ «Սենդերո Լումինոսոն» և «Տուպակո Ամարուի անվան հեղափոխական շարժումը», Մեքսիկայում՝ «Հեղափոխական սապատիտական բանակը», Կոլումբիայում՝ «Կոլումբիայի հեղափոխական զինված ուժերը», Կանադայում՝ «Ազատության լիգան», ՀԱՀ-ում՝ «Նատալի աշխատավորական գվարդիան», Ճապոնիայում՝ «Ճապոնիայի Կարմիր բանակը»: Ռուսաստանում ամենահայտնի ձախ ահաբեկչական կազմակերպություններն են «Կարմիր երիտասարդության ավանգարդը», «Հեղափոխական նոր այլընտրանքը» և «Ռազմհեղկոմը»:

Ձախ ահաբեկչական կազմակերպությունների հիմնական պահանջներն են. վերացնել կապիտալիստական հասարակարգը, սեփականազրկել խոշոր, միջին և մանր սեփականատերերին, արգելել ազատ առևտուրը, պաշտպանել ազգերի ինքնորոշման իրավունքը, վերացնել պետական հարկադրման միջոցները (դատարաններ, դատախազություններ, ազատազրկման վայրեր), ոստիկանությունը, զինված ուժերը, հասնել սոցիալական հավասարության, օրինականացնել թմրադեղերի առքուվաճառքը և բարքերի ազատությունը: Իր զարգացման ընթացքում ձախ ահաբեկչությունը լուրջ փոփոխությունների է ենթարկվել: Եթե 19-րդ դ. վերջին և 20-րդի սկզբին *«Народная воля»-ի* և այլ ահաբեկչական կազմակերպությունների շարքերը համալրում էին հիմնականում աղքատ ուսանողներն ու մտավորականները և շատ հազվադեպ՝ նաև ազնվականության ներկայացուցիչները (օրինակ՝ Վերա Զասուլիչը, որն ինքը՝ գեներալի դուստր լինելով հանդերձ, 1880թ. հունվարի 24-ին գնդակահարել էր Պետերբուրգի գեներալ-նահանգապետ Տրեպո-

վին), ապա անցած հարյուրամյակի 50-ական և 80-ական թթ. սկզբներին Եվրոպայում այդ ահաբեկչական կազմակերպությունների հիմքը կազմում էին հարուստ ընտանիքներից սերված երիտասարդները և ամենահեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ձախ ահաբեկչությունը Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Լատինական Ամերիկայում ուներ իր առանձնահատկությունները: Այսպես, օրինակ, Մերձավոր Արևելքում գործող ահաբեկիչները չէին մերժում կրոնը, իրենց գաղափարախոսության հետ միասին դավանում էին իսլամը, առօրյա կյանքում հետևում էին շարիաթի օրենքներին, առաջադրում էին իսլամական կազմակերպություններին հատուկ կարգախոսներ: Մինչդեռ Եվրոպայի և Լատինական Ամերիկայի ձախ ահաբեկիչները աթեիզմ էին քարոզում, իսկ եկեղեցին համարում էին իրենց գաղափարախոսական գլխավոր հակառակորդներից մեկը: Չնայած թվացյալ ազնվությանը՝ ձախ ահաբեկիչներն իրենց քայքայիչ գործունեության ընթացքում առանձնանում էին սանձարձակությամբ և դաժանությամբ: Նրանց կողմից իրականացվող ահաբեկչությունը չափ ու սահման չէր ճանաչում:

Իրենց դաժանությամբ առավել հայտնի ահաբեկչական կազմակերպություններն են «Կարմիր բրիգադները» Իտալիայում և «Կարմիր բանակի խմբակցությունը» Գերմանիայում: Այսպես, 1978թ. մարտի 2-ին Իտալիայի հյուսիսում գտնվող Վերոնա քաղաքում իրականացվեց, այսպես կոչված, «Վերոնյան նորածինների կոտորածը»: Այդ օրը «Կարմիր բրիգադների» գրոհայինները, Դավիդո Սանտորեի գլխավորությամբ, գնդակահարեցին տեղի ծննդատան բժիշկներին, կանանց և նորածիններին: Նույն օրը նրանք թռուցիկներ տարածեցին, որոնցով Իտալիայի կառավարությանը զգուշացնում էին, որ կշարունակեն արյունալի գործողություններն այնքան ժամանակ, քանի դեռ ՆԱՏՕ ռազմակայանները դուրս չեն բերվի Իտալիայից: Եթե 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին ահաբեկիչների թիրախ էին դառնում որոշակի մարդիկ, ապա, ձախ ահաբեկչության զարգացմանը զուգահեռ, ամբողջ հասարակությունը՝ անկախ սեռից, տարիքից, ազգային և կրոնական պատկանելությունից, ինչպես նաև սոցիալական ու հասարակական դիրքից, ընկավ նրանց նշանառության տակ: «Կարմիր բրիգադները», բազմաթիվ մարդկային զոհերով ուղեկցվող բռնի գործողություններից բացի, կազմակերպում էին նաև իտալացի հայտնի քաղաքական գործիչների սպանություններ: Այսպես, 1978թ. այս կազմակերպության ահաբեկիչները սպանեցին Իտալիայի Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության նախագահ, երկրի նախկին վարչապետ Ալդո Մորոյին:

1980-ական թթ. վերջին-90-ական թթ. սկզբին շատ երկրների ոստիկանություններն ու հատուկ ծառայությունները լուրջ հարվածներ հասցրին

ձախ ահաբեկչական կազմակերպություններին: 1994թ. ֆրանսիական հատուկ ծառայությունների աշխատակիցները ձերբակալեցին միջազգային համբավ ունեցող ձախ ահաբեկիչ Կառլոս Իլյիչ Ռամիրես Սանչեսին, որը հետագայում դատապարտվեց: Ձերբակալվեցին և դատապարտվեցին Եվրոպայի և Լատինական Ամերիկայի ձախ ահաբեկչական կազմակերպությունների ակտիվ մասնակիցները: Վերլուծաբանները նշում են, որ Եվրոպայում ձախ ահաբեկչության թուլացմանը զուգահեռ՝ քաղաքական ահաբեկչության այս տեսակը վերելք է ապրում Ասիայում, Լատինական Ամերիկայում և Ռուսաստանում [3]: Ձախ ահաբեկչության աճի նոր ազդակ կարող է հանդիսանալ գլոբալացման հակառակորդների միջազգային շարժումը, որը խիստ ապակառուցողական տարրեր է պարունակում: Աշխարհի վերափոխման և համաշխարհային գլոբալացման գործընթացների կասեցման համար մղվող պայքարում այս շարժումն առայժմ սահմանափակվում է տարբեր միջազգային կոնֆերանսների և գագաթաժողովների, տնտեսական համաժողովների, ինչպես նաև պետությունների ղեկավարների հանդիպումների ընթացքում կազմակերպվող հանրահավաքներով և զանգվածային անկարգություններով: Սակայն չի կարելի բացառել, որ գլոբալացման դեմ մղվող պայքարի ներկայիս ձևերը վերաճեն ահաբեկչության: Մեր օրերում ձախ ահաբեկչության գործունեության ապացույցն են Եվրախորհրդի պաշտոնյաների դեմ իրականացվող մի շարք ահաբեկչական գործողությունները, որոնք սկիզբ են առել 2004թ. հունվարից (հունվարի 1-ին Եվրահանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդին և այդ կազմակերպության այլ պաշտոնյաներ պայթուցիկներով ծանրոցներ են ստանում: Պատահականորեն միայն այս գործողությունների արդյունքում ոչ ոք չի տուժել: Ահաբեկչությունների պատասխանատվությունն ստանձնել են «Կարմիր բրիգադները»): 1997թ. փետրվարին ահաբեկիչները Պերուում Ճապոնիայի դեսպանատանը պատանդներ վերցրին: «Նոր հեղափոխական այլընտրանք» և «Ռազմահեղափոխական խորհուրդ» կազմակերպությունների ահաբեկիչները 1998թ. հուլիսին Սմոլենսկում պայթեցրին Նիկոլայ II-ի հուշարձանը, 1999թ. հունիսին՝ Մոսկվայի և Մոսկվայի մարզի ՀԴԲ վարչության ընդունարանը:

Ազգային ահաբեկչությունը քաղաքական ահաբեկչության տեսակ է, որի նպատակն է անկախության ձեռքբերումը տարբեր էթնիկական խմբերի համար, սահմանների վերաձևումը հօգուտ ճնշված էթնիկական խմբի, այս կամ այն ժողովրդից (որի շահերը ներկայացնում է որևէ ահաբեկչական կազմակերպություն կամ միայնակ գործող ահաբեկիչ) խլված տարածքների վերադարձը: 15-20-րդ դդ. ընթացքում տեղի են ունեցել մի շարք ողբերգական իրադարձություններ, որոնց արդյունքում ի հայտ են եկել էթնիկական և միջազգային-իրավական լուրջ հիմնախնդիրներ: Այդ իրադարձությունների

թվին պետք է դասել Անգլիայի կողմից Իռլանդիայի նվաճումը, որն սկսվեց 14-րդ դարի վերջին և ավարտվեց 18-րդ դարի սկզբին, Կորսիկայի նվաճումը Ֆրանսիայի կողմից, բասկերի երկիրը Իսպանիային կցելը, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում և Հայաստանի տարածքի մեծ մասի խլումը, Ստալինի անձի պաշտամունքի տարիներին իրականացված բռնությունները մի շարք լեռնցի ժողովուրդների նկատմամբ [4]: Այս և նման այլ իրադարձություններն ազդակ հանդիսացան այնպիսի կազմակերպությունների առաջացման համար, ինչպիսիք են «Իռլանդական հանրապետական բանակը», որը պահանջում է Հյուսիսային Իռլանդիայի միացումը Իռլանդիային, «Քրդական բանվորական կուսակցությունը», որը պահանջում է Քուրդիստանի (Իրան), Հյուսիսային Իրաքի և Թուրքիայի արևելյան տարածքներում ստեղծել քրդական անկախ պետություն, բասկյան «ԷՏԱ» ահաբեկչական կազմակերպությունը, որի նպատակն է Իսպանիայից բասկերի երկրի առանձնացումը և այնտեղ, այսպես կոչված, բասկյան անկախ ազգային պետության ստեղծումը, «Կորսիկայի ազատագրության ճակատ» ահաբեկչական կազմակերպությունը, որը պայքարում է Կորսիկա կղզում անկախ ազգային պետություն ստեղծելու համար, «Թամիլ Էլամի ազատագրության վագրեր» ահաբեկչական կազմակերպությունը, որի նպատակն է ստեղծել թամիլների անկախ ազգային պետություն Հնդկաստանի հարավարևելյան մի շարք շրջաններում ու Շրի Լանկայում և այլն:

Ի տարբերություն նշված ազգային ահաբեկչական կազմակերպությունների, չեչենական ահաբեկչական շարժումն էական առանձնահատկություններ ունի: Եթե բասկերի, իռլանդացիների, կորսիկացիների, քրդերի, թամիլների ահաբեկչական կազմակերպություններն ունեին ընդհանուր ղեկավարություն, կազմակերպիչների և ահաբեկչական գործողություններն իրականացնողների խիստ սահմանափակ շրջանակ և դրանցից յուրաքանչյուրին բնորոշ էին սեփական գաղափարախոսությունը, ահաբեկչական գործունեության մարտավարությունը, կարգուկանոնն ու աստիճանակարգությունը, ապա Չեչնիայում ահաբեկչությունը չունի այս տարբերակիչ չափորոշիչները: Դրա պատճառը նախևառաջ չեչենական հասարակության թեյփային (տոհմական) կառուցվածքն է, որը հիմնված է արյունակցական-ազգակցական կապերի վրա: Բացի այդ, նշենք նաև, որ բոլոր թեյփերի անդամներն իրար հետ կապված են արյան վրեժխնդրության սովորույթով: Այս ամենի արդյունքում Չեչնիայում հնարավոր չի համարվում դասական տիպի ահաբեկչական կազմակերպությունների գործունեությունը: Չեչենական ահաբեկչական շարժումը զարգացման երկու փուլ է անցել [5]: Հարկ է նշել, որ չեչենական շարժումը ոչ միայն ազգային կամ կրոնական շարժում է, այլ նաև բնույթով դասվում է, այսպես կոչված, աշխարհաքաղաքական ահաբեկչության շարքին:

Առաջին փուլն ընդգրկում է 1991թ. սկսած մինչև 1996թ. վերջերը, երբ չեչեն հասարակության որոշակի ուժեր, Ջոհար Դուդաևի ղեկավարությամբ, զինված պայքար էին մղում Ռուսաստանի Դաշնության դեմ: Նրանք ոչ միայն ռազմական գործողություններ էին իրականացնում Ռուսաստանի զինված ուժերի և Չեչնիայի իշխանությունների դեմ, այլև ահաբեկում էին Ռուսաստանի խաղաղ բնակչությանը (1995թ. մայիսին Շամիլ Բասաևի գլխավորած զինված խմբի հարձակումը Բուդյոնովսկ քաղաքի վրա և այլ ահաբեկչական գործողություններ): Չեչեն ահաբեկիչները նպատակադրվել էին Չեչնիան ամբողջովին անջատել Ռուսաստանի Դաշնությունից և այդ տարածքում ստեղծել Իչկերիայի անկախ ազգային պետություն: Հենց այս շրջանում էլ Ջոհար Դուդաևի մերձավոր շրջապատից առաջ քաշվեցին և լայն ճանաչում ձեռք բերեցին դաշտային հրամանատարներ Ասլան Մասխադովը, Զելիմխան Յանդարբիևը, Մովլադի Ուդուգովը, Վախա Արսանովը, Կազբեկ Մախաշևը, Շամիլ Բասաևը, Ռուսլան Գիլաևը, Ահմեդ Զակաևը, Սալման Ռադուևը և այլոք:

Չեչնիայում ահաբեկչության զարգացման երկրորդ փուլն սկսվեց Ջոհար Դուդաևի մահվանից հետո: Չեչենական շարժումը լուրջ փոփոխություններ կրեց: Այն այլևս այնքան միատարր և միասնական չէր, ինչպես Չեչնիայի առաջին նախագահի օրոք: Ռուսաստանի դեմ առաջին չեչենական պատերազմին մասնակցած յուրաքանչյուր դաշտային հրամանատար իրեն համարում էր Դուդաևի գործի միակ և անմիջական ժառանգորդը: Նրանց միջև սուր պայքար ծավալվեց իշխանության և ազդեցության ոլորտների համար, որը երբեմն վերաճում էր արյունալի բախումների: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ փուլում չեչենական ահաբեկչական կազմակերպությունները մարդկային հոծ խմբեր էին ներառում:

Զարգացման երկրորդ փուլում ահաբեկչությունն ընդարձակեց իր առջև դրված նպատակների շրջանակներն ու ծավալները: 1996թ. օգոստոսին Խասավյուրտի համաձայնագրի ստորագրումից և Չեչնիայի Հանրապետության փաստացի անկախացումից հետո գրոհայիններն աստիճանաբար փոխեցին պայքարի բնույթը: Չեչնիայի անկախացմանը զուգընթաց՝ նրանք ցանկանում էին երկրի տարածքում ստեղծել իսլամական ջամահաթ՝ փորձելով մտցնել իսլամական արմատական կառավարում: Հիշեցնենք, որ 1998թ. սկսած՝ Չեչնիայում և Հյուսիսային Կովկասի այլ հանրապետություններում սկսեցին տարածվել մուսուլմանական արմատական հոսանքի՝ վահաբականության գաղափարները:

Չեչենական առաջին պատերազմի ժամանակ այստեղ գտնվող աֆղան, պակիստանցի, թուրք և արաբ շատ գրոհայիններ քարոզում էին վերոնշյալ գաղափարները: Ժամանակի ընթացքում նրանք Չեչնիայում մեծ ազ-

դեցություն ձեռք բերեցին, և երբ Մերձավոր ու Միջին Արևելքի ուղղափառ իսլամիստների ֆինանսական մատակարարումները նկատելի կերպով գերազանցեցին գրոհայինների եկամտի մյուս աղբյուրները, այդ մարդկանց ձեռք բերած իշխանությունն ու հեղինակությունն այլևս անբեկանելի դարձավ: Արաբ գրոհայինների մեջ ամենահեղինակավորն ու ամենաազդեցիկն էին հորդանանցի Խատաբը, Աբու Ումարը, Աբու Յակուբը, Աբու Թարիկը, սաուդցիներից՝ Աբու Ալ Վալիդը, Աբուբաքրը և ուրիշներ: Այդ ժամանակ Չեչնիա ներթափանցեց նաև «Ալ Կաիդա» միջազգային ահաբեկչական կազմակերպությունը: Ավելին, ահաբեկիչներն սկսեցին Ռուսաստանից Հյուսիսային Կովկասը, Պովոլժիեն և Ուրալն անջատելու ծրագրեր կազմել: Դրանք այն տարածքներն են, որոնցում հոծ մահմեդական բնակչություն կա: Հենց այդ նպատակով էլ 1999թ. սեպտեմբեր-օգոստոսին Շամիլ Բասաևի և Խատաբի գրոհայինները Չեչնիայից ներխուժեցին Դաղստան: Ռուսական բանակի, ներքին զորքերի, ՆԳՆ-ի և ԱԴԾ-ի (*ՖՀԲ*), սահմանապահների, Դաղստանի ոստիկանության և տեղի աշխարհազորի վճռական, համակարգված գործողությունների շնորհիվ գրոհայինների մի մասը ոչնչացվեց, մյուսները փախան Չեչնիա: Չեչենական ահաբեկչության զարգացման երկրորդ փուլում շարժմանն ակտիվորեն ներգրավվեցին կանայք, ծերեր և դեռահասներ: Քաղաքական անկայունությունը, ծանր տնտեսական վիճակը, զանգվածային գործազրկությունը, կոռուպցիայի և հանցավորության բարձր մակարդակը Հյուսիսային Կովկասի բնակչությանը մղում են ընկնելու գրոհայինների ազդեցության տակ: Զգտելով բարոյահոգեբանական ինտենսիվ մշակման և քարոզչության միջոցով շարժումը ներկայացնել հերոսական լուսապսակով՝ գրոհայինները գործազուրկ կանանց, դեռահասներին և ծերերին անխուսափելի կործանման դատապարտող գործողությունների են մղում: Բավականաչափ գրագիտություն և գիտելիքներ չունեցող ահաբեկիչ մահապարտներն այդ քայլին դիմում են՝ հուսալով «ընկնել ուղղահավատ մուսուլմանների համար նախատեսվող դրախտ»:

Ազգային ահաբեկչությունն այսօր էլ գործունեության լայն ասպարեզ ունի: Այս հոսանքին պատկանող մեզ հայտնի ահաբեկչական կազմակերպությունների մեծ մասը դեռևս վայր չի դրել զենքերը: Աշխարհի բազում տարածաշրջաններում տարբեր էթնիկական խմբերի բարդ փոխհարաբերությունները, տեղային նշանակության բազմաթիվ միջազգային հակամարտությունները և հզոր տերությունների՝ հաճախ ոչ ճիշտ միջնորդությունները դրանց լուծման գործին՝ նպաստավոր հող են ստեղծում ազգային ահաբեկչական կազմակերպությունների հանցավոր գործունեության ընդլայնման և նոր ահաբեկչական կազմակերպությունների ստեղծման համար, որոնք հանդես են գալիս հօգուտ այս կամ այն էթնոսի պահանջներ ներկայացնելով:

Ազգային ահաբեկչության նոր թափ կարող է նկատվել այնպիսի պետություններում, որտեղ տարբեր ազգային խմբավորումների միջև գոյություն ունեցող քաղաքական և տնտեսական հակասությունները դեռևս ամբողջովին չեն հաղթահարվել: Ասվածը հաստատում են 20-րդ դարի 90-ական թթ. Հարավսլավիայում տեղի ունեցած իրադարձությունները:

Միլիտոկրատական ահաբեկչությունը (լատիներեն *milito*-ռազմական և *kratos*-իշխանություն բառերից) քաղաքական ահաբեկչության տեսակ է, որի նպատակն է որոշակի պետությունում հաստատել կոշտ ռազմական ռեժիմ: Միլիտոկրատական հոսանքի ահաբեկիչները ձգտում են հաստատել միասնականացված աշխարհակարգ, որտեղ գերիշխող դեր կունենան բանակը, հատուկ ծառայությունները և ոստիկանությունը: Առաջին անգամ նման կազմակերպություններ ի հայտ եկան 20-րդ դ. 50-ական թթ. Ֆրանսիայում: Դրանք գոյատևեցին բավական երկար՝ մինչև 80-ական թթ. վերջը: Այդ կազմակերպություններից էին՝ «Ոստիկանական համերաշխության միությունը» (որի ղեկավարներն էին «Սյուրտե» ֆրանսիական քրեական ոստիկանության աշխատակիցներ Ժյուլ Պինոն և Կլոդ Աբրերը), «Առաջադեմ կարգուկանոնի ասպետները», «Մեծ Ֆրանսիայի զտողների լեգեոնը» և այլն: Այս խմբավորումները համալրված էին ֆրանսիական բանակի սպաներով, ոստիկաններով, ժանդարմերիայի և հատուկ ծառայությունների աշխատակիցներով, որոնք ծառայում էին Հյուսիսային Աֆրիկայի և Հնդկաչինի ֆրանսիական գաղութներում: Այնուհետև միլիտոկրատական ահաբեկչական կազմակերպությունները տարածում գտան նաև Գերմանիայում, Բելգիայում, Հոլանդիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Հունաստանում, Հունգարիայում, ԱՄՆ-ում ու ՀԱՀ-ում:

20-րդ դարի 90-ական թթ. սկզբին նման կազմակերպություններ ստեղծվեցին նաև Ռուսաստանում: Միլիտոկրատական ահաբեկչության ծագման և զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր երկրում ահաբեկչության այդ տեսակն ուներ իր առանձնահատկությունները: Ինչպես իր «Կարմիր մաֆիա» գրքում նշում է Ռուսաստանի ՆԳՆ նախկին աշխատակից, այժմ՝ Պետդումայի «Միասնական Ռուսաստան» խմբակցության պատգամավոր, գնդապետ Ալեքսանդր Գուրովը, «Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում զինվորական ու ոստիկանական մահվան բրիգադների անդամներ էին դառնում հիմնականում ոստիկաններն ու զինվորականները, որոնք բազմաթիվ մարտական պարգևներ և հիանալի ծառայողական կենսագրություն ունեին» [6]: Իսկ Ռուսաստանում, ինչպես նշված է ՆԳՆ և ԱԴԾ վերլուծական նյութերում, միլիտոկրատական ահաբեկչական կազմակերպությունները ձևավորվեցին իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների աշխատակիցներից, զանազան հանցագործությունների (կաշառակերու-

թյուն, պաշտոնական դիրքի չարաշահում, դրամաշորթություն, սպանություն, զենքի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի և այլ զինատեսակների հափշտակում ու վաճառք և այլն) համար դատապարտված սպաներից:

Ռուսաստանում ամենահայտնի միլիտոկրատական ահաբեկչական կազմակերպություններից են «Սպիտակ նետը» և «Նոր կարգը»: Միլիտոկրատական ահաբեկչության գաղափարախոսության հիմնադրույթը վերաբերում է լիովին ռազմականացված հասարակությանը՝ մարդու անձնական և տնտեսական կյանքի խիստ բարձր մոբիլիզացմամբ: Պետությունը, ըստ միլիտոկրատ ահաբեկիչների, զինվորականների ձեռքը պետք է տա օրենսդիր և գործադիր ողջ իշխանությունը: Միլիտոկրատական ահաբեկչության գաղափարախոսները կարծում են, որ զինվորականները լիակատար իրավունք ունեն անսահմանափակ կերպով միջամտել ինչպես երկրի քաղաքական, հասարակական և տնտեսական գործունեությանը, այնպես էլ քաղաքացիների անձնական կյանքին: Մարտնչող միլիտոկրատիայի կողմնակիցները հանդես են գալիս հօգուտ այնպիսի տնտեսության կազմակերպման, որտեղ կպաշտպանվեն բոլոր տեսակի սեփականատերերի իրավունքները, իսկ քաղաքացիների սոցիալական պաշտպանությունը կլինի այնպիսի մակարդակի, որը թույլ կտա նրանց ձեռնպահ մնալ օրինախախտումներից: Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ միլիտոկրատական ահաբեկչական կազմակերպությունների համակազմը (կոնտինգենտ) տարբերվում է Ռուսաստանի համանման կազմակերպությունների համակազմից:

Հետազոտողներից շատերը (այդ թվում նաև ռազմական ոլորտի անգլիացի մասնագետ Հարի Բրինլոուն իր «Ժամանակակից հասարակության ավարտին չհասցված պատերազմները» գրքում) նշում են, որ ԽՍՀՄ փլուզումը, բանակի և գործող ուժային կառույցների սրընթաց թուլացումը 1990-ական թթ. սկզբին, Արևելյան Եվրոպայից և Մերձբալթիկայից ռուսական զորքերի չկշռադատված և արագ դուրսբերումը, բանակում ծառայության և հատուկ ծառայություններում աշխատանքի վարկի անկումը երիտասարդների շրջանում, զինվորականների և իրավապահ մարմինների աշխատակիցների սոցիալական դրության վատթարացումը հանգեցրին ընդվզողական տրամադրությունների աճին բանակում և ոստիկանությունում, մեծացավ վերջինների դժգոհությունը պետության նկատմամբ ընդհանրապես [7]:

Մինչդեռ ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում միլիտոկրատական ահաբեկչության առաջացման պատճառ հանդիսացան հետարդյունաբերական հասարակության խոցելիությունը ժամանակակից մարտահրավերներին՝ ահաբեկչությանը, թմրանյութերի տարածմանը դեմ-հանդիման, բարոյականության անկումը, վառ արտահայտված անհատապաշտությունը, ինչը խիստ բնորոշ է այնտեղի սպառողական հասարակությանը: Բացի

այս ամենից, միլիտոկրատ ահաբեկիչները վստահ են, որ բնակչությունն անկարող է համախմբվել պետության համար դժվար և բեկումնային պահին: Այս ամենը կարող էր կանոնակարգով ապրող և կյանքը հայրենիքին նվիրաբերած մարդկանց մղել դեպի քաղաքական ահաբեկչության ուղի:

Որոշ հետազոտողներ (ինչպես, օրինակ, Քենեթ Իզարդն իր «Ահաբեկչության զգայական դեմքը» գրքում) միլիտոկրատական ռազմական կազմակերպությունների մարտիկներին համարում են աջ ահաբեկիչներ [8]: Սակայն հարկ է հաշվի առնել, որ, ի տարբերություն աջ խմբավորումների, ազգային հատկանիշը չափանիշ չէ նման կազմակերպություններում ընդգրկվելու համար: Այս կառույցների գաղափարախոսության մեջ գոյություն ունի «հասարակության մաքրություն» հասկացությունը, որը բնորոշ է աջ խմբավորումներին: Մյուս կողմից՝ նրանք ունեն մի կանոնակարգ, ըստ որի՝ տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչներին տրվում են նրանց հասանելիք բոլոր սոցիալական բարիքները, ինչը նրանց մոտեցնում է ձախ ահաբեկիչներին: Այս մանրամասները թույլ են տալիս եզրակացնել, որ միլիտոկրատական ահաբեկչությունը քաղաքական ահաբեկչության առանձին տեսակ է, որն ունի իր տարբերակիչ առանձնահատկությունները և որի զարգացումը դեռևս շարունակվում է:

Կրոնական ահաբեկչությունը քաղաքական ահաբեկչության տեսակ է, որի հիմնական նպատակն առանձին պետությունների արմատական վերափոխումն է և այնպիսի աշխարհակարգի հաստատումը, որը պետք է համապատասխանի հասարակության այն խմբերի կրոնական ու մշակութային պատկերացումներին, որոնք դավանում և քարոզում են տվյալ գաղափարախոսությունը: Կրոնական ահաբեկչական կազմակերպությունների շարքին են դասվում «Սպիտակ եղբայրներ» աղանդն Ուկրաինայում (դրա հետևորդները ծրագրում էին խոշոր ահաբեկչությունների մի ամբողջ շարք իրականացնել Կիևում, Լվովում և հանրապետության այլ քաղաքներում), «Դավթի ճյուղ» աղանդն ԱՄՆ-ում (որի անդամները ծրագրում էին ահաբեկչական գործողություններ կատարել Միացյալ Նահանգների քաղաքներում), «Առում Սինրիկե» աղանդը Ճապոնիայում (այս կազմակերպության գրոհայինները 1995թ. օգոստոսին գազային հարձակումներ իրականացրին Տոկիոյի և Կոբեի քաղաքային մետրոների կայարաններում): Արժե հատկապես հիշատակել արմատական իսլամական հոսանքի մասին: Վերոնշյալ աղանդների և արմատական մուսուլմանական հոսանքների գաղափարախոսությունն ամենայն համոզվածությամբ կարելի է համարել տոտալիտար, այն խախտում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները:

Ներկայում, իրավամբ, ամենավտանգավոր կրոնական ահաբեկիչներն են համարվում իսլամական կրոնական ծայրահեղականները: Դրանց

գաղափարախոսության հիմնական բաղադրիչներն են պանիսլամիզմը և կրոնական ֆունդամենտալիզմը: Ընդունված է համարել, որ պանիսլամիզմն առաջացել և որպես լիարժեք քաղաքական ուսմունք ձևավորվել է 19-րդ դ. կեսին: Այն մշակել են արաբ մտածողներ Մուհամեդ Աբդոն և Ջելալեդդինը: Իսլամական ահաբեկիչների գլխավոր նպատակն է իսլամի տարածումը ողջ երկրագնդում, բոլոր մահմեդականների միավորումը մեկ իսլամական պետությունում, որը պետք է ձեռք բերի համաշխարհային տիրապետություն: Սակայն հարկ է նշել, որ իսլամական արմատական կազմակերպությունները խիստ բաժանված են ըստ իսլամում գոյություն ունեցող ներկրոնական ուղղությունների (սուննիներ, շիաներ և այլն): Առաջին իսլամական ահաբեկչական կազմակերպությունը «Մահմեդական եղբայրներն» է, որ հիմնվել է 1928թ. Սաուդյան Արաբիայում: Ղեկավարն էր տեղի հոգևոր դպրոցներից մեկի աստվածաբանության ուսուցիչ Հասան Ալ Բանան: Հետագայում կազմակերպությունն այնքան ընդլայնվեց, որ մասնաճյուղեր առաջացան Եգիպտոսում, Եմենում, Սիրիայում, Լիբիայում, Ֆրանսիայում, Բոսնիայում և Հերցեգովինայում, Աֆղանստանում ու այլ երկրներում: Իսլամական ահաբեկչական կազմակերպություններում գործում է նոր անդամների ընտրության խիստ կոշտ համակարգ, որի կանոնների համաձայն, այս ահաբեկչական կազմակերպություններին անդամակցելու համար պարտադիր է մուսուլմանական կրոնին պատկանելը, շարիաթի օրենքներին խստորեն հետևելը: Ահաբեկչական կազմակերպության անդամների վարքը պարտադրաբար պետք է համապատասխանի իսլամի կանոններին: Այլ կրոնի ներկայացուցիչներին իսլամական ահաբեկիչները թշնամի են համարվում: Այն պետությունները (Ռուսաստան, ԱՄՆ, Իսրայել և այլն), որոնք առավել ակտիվորեն են դիմակայում իսլամական ահաբեկչությանը, այս արմատականների կարծիքով՝ ենթակա են ոչնչացման:

Չնայած բոլոր մահմեդականների ընդհանրության և միասնության մասին հայտարարություններին, իսլամական ահաբեկչական կազմակերպությունները խիստ թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ: Իսլամական ահաբեկչության առաջնորդներից յուրաքանչյուրը հավակնում է բոլոր մահմեդականների հովանավորի դերին: Միևնույն ժամանակ, տարբեր հոսանքների միջև գոյություն ունեցող սուր թշնամանքն անդրադառնում է նաև այս ուղղության ծայրահեղական խմբավորումների վրա: Հատկապես սուր երկպառակտչական բնույթ ունեն պայքարը վահաբական և սուննի խմբավորումների միջև Պաղեստինում, շիա և սուննի ահաբեկչական կազմակերպությունների հակամարտությունը Պակիստանում:

Իսլամական ահաբեկչության խիստ առանձնահատուկ առանցքային հատկանիշներից են ահաբեկիչ մահապարտները: Պաղեստինից բացի, որ-

տեղ առաջին արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ (1948-49թթ.) լայնորեն օգտագործում էին մահապարտներին, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Աֆղանստանում, Պակիստանում, Իրաքում, աշխարհի այլ երկրներում ևս իսլամական ահաբեկիչները դիմում են այս մարտավարությանը: Մահապարտ ահաբեկիչներն առաջնորդվում են Ղուրանի այն դրույթով, ըստ որի՝ յուրաքանչյուր ուղղահավատ մահմեդական պարտավոր է ջիհադ (սրբազան պատերազմ) մղել անհավատների դեմ և անհրաժեշտության դեպքում զոհաբերել կյանքը հանուն ատելի թշնամու դեմ հաղթանակի: Սակայն այստեղ հարկ է նշել, որ Ղուրանի համաձայն, ջիհադ հայտարարելու իրավունք ունեն միայն հոգևոր անձինք և ոչ թե ահաբեկչական կազմակերպությունների ղեկավարները կամ իսլամական ռազմական կազմավորումների դաշտային հրամանատարները: Մեկ այլ կարևոր հանգամանք ևս. ջիհադի ժամանակ գործում է պարզ ու հստակ մի պահանջ. սրբազան պատերազմի ընթացքում ոչ մի դեպքում չպետք է տուժեն անմեղ մարդիկ: Ըստ Ղուրանի՝ անհավատ են համարվում միայն նրանք, ովքեր, չհետևելով «ճշմարիտ հավատի» օրենքներին, փորձում են հալածել նրա հետևորդներին և ծաղրուծանակի են ենթարկում իրենց ուսմունքը: Այսպիսով, կարելի է վստահաբար ասել, որ օգտվելով մուսուլմանների մեծամասնության տգիտությունից, աղքատությունից ու անգրագիտությունից, ինչպես նաև համապատասխան քաղաքացիական ու հասարակական գիտակցության բացակայությունից՝ ահաբեկիչները լուրջ և ճկուն հոգեբանական աշխատանք են իրականացնում մարդկանց մեջ: Ահաբեկիչները լիակատար վերահսկողություն են սահմանում վերջիններիս վրա, նրանց մղում են կրոնական մոլեռանդության և դաժան գործողությունների [9]: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, առավել հեշտությամբ նման հոգեբանական մշակման զոհ են դառնում մարդիկ, ովքեր մեծ անձնական ողբերգություն են ունեցել: Այսպես, օրինակ, 2002թ. հոկտեմբերին Մոսկվա Բարանի և Աբուբաքրի հրամանատարությամբ գործող ահաբեկիչների կողմից Մոսկվայում, Դուբրովկայի թատերական կենտրոնում կազմակերպված զինված գրավմանը մասնակցում էին կին ահաբեկիչ մահապարտներ, որոնց մեծ մասը առաջին և երկրորդ չեչենական պատերազմների ընթացքում զոհված չեչեն գրոհայինների այրիներ էին:

Իսլամական ահաբեկչությունը հստակ չի ուրվագծում իր զոհերի շրջանակը: Իսլամական ահաբեկչական խմբավորումների մասնակիցների կատարած հանցագործություններն աչքի են ընկնում մարդկային զոհերի մեծ քանակությամբ, հսկայածավալ ավերածություններով և նյութական վնասներով: Դրանք, անկասկած, մեծ վտանգ են ներկայացնում հասարակության համար: Իսլամական ահաբեկիչներն իրենց քարոզչությամբ մշտապես փոր-

ձում են ստեղծել կեղծ պատրանք, թե իբր իրենց ահաբեկչությունների զոհ են դառնում իսլամի մոլի հակառակորդները [10]: Իրականում, սակայն, իրենց առջև բացառապես քաղաքական և տնտեսական նպատակներ դնելով և մտահոգվելով սոսկ սեփական ֆինանսական ու քաղաքական շահերով՝ իսլամական ահաբեկչական կազմակերպությունների առաջնորդներն ու նրանց համախոհները մշտապես աղավաղում են իսլամի դրույթները և հիմնականում պատերազմում են անմեղ մարդկանց դեմ:

Միջազգային հանրությունը խիստ մտահոգ է նրանով, որ կրոնական ահաբեկչական կազմակերպությունները ձգտում են ձեռք բերել զանգվածային ոչնչացման զենքի բոլոր տեսակները՝ քիմիական, բակտերիոլոգիական և նույնիսկ միջուկային: Բակտերիոլոգիական և քիմիական զենքն արդեն կիրառվել է 1995թ. Ճապոնիայում (Տոկիոյի և Կոբեի քաղաքային մետրոյի կայարաններում «Առում Սինրիկե» աղանդի գրոհայիններն օգտագործեցին զարին և ֆոսգեն թունանյութերը) և 2001-2002թթ. ԱՄՆ-ում իրականացված ահաբեկչությունների ժամանակ:

Բնութագրական օրինակ է 1996թ. վերջին «Թալիբան» շարժման իշխանության գալը Աֆղանստանում: Այն երկիրն իսկական ճամբարի վերածեց աշխարհի իսլամական ռազմական խմբավորումների մեծամասնության համար: Թալիբները երկրում արգելեցին գրականությունը, բացառյալ իսլամականը, հեռուստառադիոհաղորդումները, մամուլը, երաժշտությունը: Բացի այդ, թալիբները կասեցրին բոլոր քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Աֆղանստանում աշխատող միջազգային կազմակերպությունների և մարդասիրական առաքելությունների աշխատակիցները, մահվան սպառնալիքով, հարկադրված էին թողնել երկիրը: «Թալիբան» շարժման ղեկավարներն էին մոլլաներ Մուհամադ Օմարը, Մուհամադ Ռաբանին, Աբդուլ Սալամ Զաիֆը և ուրիշներ: (Աֆղան մոջահեդներն, իբրև կամավորներ, աղրբեջանցիների կողմից մասնակցում էին նաև Լեռնային Ղարաբաղի մարտական գործողություններին):

Համաշխարհային իսլամական ահաբեկչական շարժման մեջ առանձնահատուկ դերակատարություն ունեն Ուսամա Բեն Լադենը և նրա գլխավորած «Ալ Կաիդա» միջազգային իսլամական ահաբեկչական կազմակերպությունը: ԿՀՎ վերջին տվյալների համաձայն, կազմակերպությանն անդամակցում են 200.000 մարդ [11]: Այն մասնաճյուղեր ունի աշխարհի 49 երկրներում, այդ թվում և Սուդանում, Ֆրանսիայում, Անգլիայում, Թուրքիայում, Ալժիրում, Ինդոնեզիայում, Աֆղանստանում, Պակիստանում: «Ալ Կաիդայի» հիմնական կորիզը, այսպես կոչված, արաբ աֆղաններն են՝ գրոհայիններ արաբական պետություններից, ովքեր 1979-89թթ. իբրև կամավոր կռվել են աֆղան մոջահեդների կողմից, խորհրդային զորքերի դեմ:

Իշխանության եկած աֆղան մոջահեդներն անմիջապես հրաժարվեցին արաբ գրոհայինների ծառայություններից և կտրուկ պահանջեցին, որպեսզի նրանք հեռանան երկրից: Ուսամա Բեն Լադենը և նրա համախոհները ԱՄՆ-ը, միաժամանակ նաև Ռուսաստանն ու Իսրայելը հայտարարեցին իսլամի թշնամիներ և ստեղծելով վերոնշյալ կազմակերպությունը՝ բոլոր մուսուլմաններին ջիհադի կոչ արեցին այդ պետությունների և նրանց դաշնակիցների դեմ: Բացի այդ, Բեն Լադենը և նրա համախոհները դատապարտեցին Պարսից ծոցի մի շարք երկրների ավանդապաշտական վարչակարգերին ԱՄՆ-ի հետ համագործակցելու համար: Ուստի իրենց կողմնակիցներին կոչ արեցին ահաբեկչություններ կատարել նաև այս պետությունների դեմ: Առաջին անգամ ահաբեկչության պատմության մեջ Ուսամա Բեն Լադենին հաջողվեց համախմբել բազում իսլամական ահաբեկչական կազմակերպությունների ջանքերը, որոնք մինչ այդ գործում էին անջատ և սուր թշնամանք էին տածում միմյանց նկատմամբ:

Արժե հիշատակել նաև, որ առաջին անգամ իսլամական ահաբեկչության պատմության մեջ կազմակերպության կառավարման հիմքում դրվեց, այսպես կոչված, ցանցային վարչարարության սկզբունքը. Ուսամա Բեն Լադենից բացի, կազմակերպությունը ղեկավարում է բարձրագույն մարմինը, որտեղ յուրաքանչյուրն ունի գործունեության իր ոլորտը, որի համար պատասխանատու է անձամբ, իսկ ընդհանրապես կազմակերպությանը վերաբերող որոշումները կայացվում են կոլեգիալ սկզբունքով: Այս ամենը «Ալ Կաիդան» դարձնում է վտանգավոր և հզոր ահաբեկչական կազմակերպություն, որն սպառնում է ամբողջ աշխարհի պետություններին:

Այսպիսով, կարելի է ասել, որ կրոնական ահաբեկչությունը, քաղաքական ահաբեկչության ամենակայուն և վտանգավոր տեսակներից մեկը լինելով, անընդհատ զարգանում է և կատարելագործում պայքարի ձևերն ու մեթոդները: Մահմեդական երկրների թույլ տնտեսությունը և դրանից բխող աղքատությունն ու կրթության ցածր մակարդակը նպաստավոր պայմաններ են ստեղծում իսլամական ահաբեկչական կազմակերպությունների անընդհատ համալրման համար: Կրոնական ահաբեկչությունը շարունակում է զարգանալ և աճի միտում ունի:

2. Պետական ահաբեկչություն

Պետական ահաբեկչությունը ահաբեկչության կառուցվածքային առանձնահատկություն է, որի դեպքում ահաբեկչական գործողությունների նախապատրաստմանն ու իրականացմանը մասնակցում են պետությունը, պետական կառույցներն ու դրանց ներկայացուցիչները: Որոշ հետազոտողներ (ինչպես, օրինակ, Յուրի Անտոնյանն իր «Ահաբեկչություն. քրեաբանա-

կան և հոգեբանական հետազոտություն» գրքում) պետական ահաբեկչություն են համարում ցեղասպանությունը, պետության կողմից կազմակերպված զանգվածային սպանություններն ու կոտորածները, որոնց նպատակն է էթնիկական, կրոնական և սոցիալական ամբողջ խմբերի լրիվ կամ մասնակի ոչնչացումը կամ երկրից արտաքսումը: Այս տեսակետից պետական ահաբեկչության ցայտուն օրինակներ են հանդիսանում Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, նացիստական Գերմանիայի կողմից հրեաների ոչնչացումը և այլ հանցագործություններ, որ իրականացվել են համաշխարհային պատմության այս կամ այն փուլում, ավտորիտար և տոտալիտար զանազան վարչակարգերի կողմից [12]:

Ներքաղաքական ահաբեկչության դեպքում ահաբեկչությունն իրականացվում է մեկ առանձին վերցրած պետության սահմաններում: Այն բնորոշ է ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական, քրեական և կենցաղային ահաբեկիչներին: Ինչպես նշում է ԽՍՀՄ ՊԱԿ հինգերորդ գլխավոր վարչության նախկին աշխատակից, այժմ՝ Ռուսաստանի հասարակական անվտանգության ակադեմիայի նախագահ Վասիլի Ուդիլովն իր «Ինչոր բան ահաբեկչության մասին» գրքում, «ներքաղաքական ահաբեկչությունը, առանց բացառության, հիմնախնդրային է բոլոր պետությունների համար, քանի որ ապակառուցողական տարրը, որ պարտադիր կերպով առկա է ցանկացած երկրի քաղաքական կյանքում, վաղ թե ուշ սկսում է գործել, և քաղաքականության մեջ ու հասարակական կյանքում տեղ գրավելու նրա հայտը առավել կործանիչ, հանդուգն ու մարտաշունչ բնույթ է կրում» [13]:

Միջազգային ահաբեկչության դեպքում դրա ծավալները չեն սահմանափակվում միայն մեկ առանձին երկրի սահմաններով, այլ դուրս գալով մեկ երկրի սահմաններից՝ ի վիճակի են դառնում առաջ բերել միջազգային քաղաքական իրադրության լուրջ լարվածություն, առանձին պետությունների միջև հարաբերությունների վատթարացում և սադրել ռազմական բախումներ այդ պետությունների միջև: Ահաբեկչական այս գործունեությունը բնորոշ է քաղաքական ու տնտեսական ահաբեկիչներին, ինչպես նաև լավ կազմակերպված մեծաթիվ անձնակազմ ունեցող քրեական կառույցներին (օրինակ՝ կոլումբիական թմրամաֆիան, որը 1980-ական թթ. վերջին-90-ական թթ. սկզբին ահաբեկչությունների մի անբողջ շարք իրականացրեց ԱՄՆ-ում, Մեքսիկայում, Պերուում և Կոլումբիայում):

Ներկա փուլում որոշ միջազգային կազմակերպություններ իրենց ավանդն են ներդնում որոշ երկրների ու տարածաշրջանների տնտեսության զարգացման գործում՝ դրանց տարածքներում կազմավորելով լեգալ ընկերություններ և արդյունաբերական ձեռնարկություններ (օրինակ՝ Լիբանանում, Սիրիայում, Աֆղանստանում գործում են լեգալ ձեռնարկու-

թյուններ, որոնք վերահսկվում են ահաբեկչական հայտնի կազմակերպությունների՝ «Համասի», «Ալ Իհվահի», «Ալ Կաիդայի» կողմից): Անգլիացի քաղաքագետ Ուիլյամ Լոուրենսը նշում է, որ «հաճախ այդ ձեռնարկությունների հաշվին են լուծվում վերոնշյալ տարածքների սոցիալական խնդիրները, ինչը պակաս կարևոր չէ մանավանդ այն դեպքում, երբ հաշվի է առնվում մարդկության ժամանակակից համաշխարհային անհավասարաչափ զարգացումը» [14]: Քաղաքական և հասարակական գործիչներին հատկապես անհանգստացնում է միջազգային ահաբեկիչների՝ զանգվածային ոչնչացման զենք ձեռք բերելու ձգտումը:

Եզրակացություն

Աշխարհի բոլոր և հատկապես այն երկրների քաղաքական ու պետական գործիչները, որոնցում առանձնապես սուր է ահաբեկչության խնդիրը, իրենց ելույթներում շեշտը նախնառաջ դնում են ահաբեկչության դեմ պայքարի ուժային բաղադրիչի վրա, այսինքն՝ իրականացվում են զինված ուժերի, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների կոշտ գործողություններ, ինչպես նաև մտցվում է ռազմավարական նշանակության տնտեսական, ռազմական ու պետական օբյեկտների անվտանգության պահպանմանն ուղղված միջոցառումների խստացում: Չժխտելով նման գործողությունների անհրաժեշտությունը՝ չպետք է մոռանալ նաև այն մասին, որ ահաբեկչությունը պատահականորեն չի առաջացել: Այն ծագել և ժամանակի ընթացքում ինտենսիվորեն զարգացել է մարդկային հասարակության պատմական, քաղաքական, տնտեսական, կրոնական զարգացման այն նախադրյալների շնորհիվ, որոնք հող էին նախապատրաստել սուր հակամարտությունների առաջացման համար:

Խոսելով միջազգային ընդգրկում ստացած և առանձին պետության շրջանում չսահմանափակվող ահաբեկչության դեմ պայքարի մասին՝ հարկ է նշել, որ այդ պայքարի համար պահանջվում է բոլոր պետությունների ուժերի համախմբում: Այնինչ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի շուրջ ծագող հարցերի վերաբերյալ պետությունների միջև հաճախ տարաձայնություններ են առաջանում: Ասվածը հատկապես վերաբերում է հանցագործությունների (որոնք կարելի է ահաբեկչական համարել) մեջ կասկածվողների էքստրադիցիային առնչվող հարցերին: Այդ տարակարծությունների պատճառ կարող են հանդիսանալ ինչպես տարբեր երկրների քրեական օրենսդրության անհամապատասխանությունը «ահաբեկչություն» իրավաբանական հասկացության մեկնաբանմանը, այնպես էլ այս կամ այն հարցին քաղաքական մոտեցումներում առկա տարբերությունները կամ հակասական դիրքորոշումները: Ցավոք, որոշ երկրներ իրենց ար-

տաքին քաղաքականության մեջ կիրառում են, այսպես կոչված, երկակի ստանդարտների համակարգը: Ինչպես նշել է ՌԴ նախկին արտգործնախարար, այսօր՝ Անվտանգության խորհրդի քարտուղար Իգոր Իվանովը, «ահաբեկիչներին բաժանում են յուրայինների և օտարների»: Այդպիսի երկրները, պայքարելով մի ուղղության ահաբեկչական կազմակերպության դեմ, միևնույն ժամանակ, ոչնչով չեն խոչընդոտում իրենց տարածքում գործող այլ կողմնորոշման ահաբեկիչների գործունեությանը: Կարևոր է ըմբռնել, որ նման իրավիճակում և՛ պետությունը, և՛ հասարակությունը վաղ թե ուշ վերածվում են ծայրահեղականների հավանական թիրախի և անպաշտպան են դառնում այն ահաբեկիչների ոտնձգություններից, որոնք մինչ այդ գործողությունները որոշ ազատություններ ունեին և նույնիսկ զգալի ֆինանսական ու կազմակերպական աջակցություն էին ստանում:

ԱՄՆ-ում 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո համաշխարհային հանրությունն առավել ևս ըմբռնեց, թե որքան անհրաժեշտ էր համախմբել տարբեր երկրների գործողություններն այդ երևույթի դեմ պայքարում: Ահաբեկչության դեմ մարտնչող երկրների համար այժմ խիստ կարևոր է համակարգել մի այնպիսի օրենսդրություն, որը կստեղծի միասնական իրավական նորմեր, որոնք թույլ կտան առավել համակարգված և առանց բյուրոկրատական խոչընդոտների արդյունավետ համագործակցություն հաստատել (ինչպես փորձագետների, այնպես էլ իշխանության տարբեր մակարդակներում) ահաբեկչության դեմ պայքարում:

Համաշխարհային պատմության զարգացման ամբողջ ընթացքում և հատկապես հասարակական-տնտեսական հասարակարգերի հերթագայության փուլում անխուսափելիորեն առաջանում էին լուրջ քաղաքական ու տնտեսական ցնցումներ, որոնք հանգեցնում էին գոյություն ունեցող ամբողջ արժեհամակարգի արմատական փոփոխությանը և դժվարին սոցիալ-քաղաքական կացության մեջ էին դնում բնակչության որոշակի խմբերի: Հակասությունները ոչ բռնի մեթոդներով հարթելու օբյեկտիվ անհնարինությունը կամ հակամարտության մասնակիցների սուբյեկտիվ չկամությունը պարարտ հող ստեղծեցին ահաբեկչության համար՝ այն դարձնելով առկա հակամարտության շահավետ լուծման հիմնական գործիք:

Ի վերջո, ահաբեկչությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հակամարտող կողմերի փոխգործողությունների արտահայտություն, պայքար, որտեղ մի կողմի յուրաքանչյուր գործողություն անխուսափելիորեն հանդիպում է հակամարտող կողմի դիմակայությանը: Ահաբեկչական գործունեության մեջ, ինչպես և ցանկացած այլ հակամարտ գործողություններում, մասնակիցները հստակ բաժանված են երկու ախոյան ճամբարների, որոնք պայմանականորեն կոչվում են «մենք» և «նրանք»:

Նման իրավիճակում անհրաժեշտ է մի փոքր փոփոխել հակամարտության բնույթը: Դա հատկապես վերաբերում է այն հարցերին, որոնք կապված են ազգային և կրոնական ահաբեկչությանը դիմակայելու հետ: Գաղտնիք չէ, որ նշված ուղղության ահաբեկչական կազմակերպությունների անդամները փորձում են պարտադրել այն տեսակետը, ըստ որի՝ իրենց պայքարը տարբեր քաղաքակրթությունների օբյեկտիվ դիմակայության արդյունք է, և այդ պայքարում կարող է լինել միայն մեկ հաղթող: Այս տեսակետը հերքելը շատ հեշտ է, քանի որ գիտության և կրթության զարգացման ներկա փուլում, հաղորդակցության զարգացման և տեղեկատվական ու տեխնիկական ռեսուրսների աճի պայմաններում տարբեր մշակույթների և կրոնների ներկայացուցիչները հնարավորություն ունեն ուսումնասիրել այլ քաղաքակրթությունների պատմությունն ու մշակույթը, երկխոսություն վարել այլ դավանանքի ներկայացուցիչների հետ:

Զախ և ներքաղաքական ահաբեկչությունը խթանող լուրջ գործոններից են նաև բնակչության տարբեր խմբերի միջև ծագող սուր առճակատումները. քաղաքական, հասարակական, մշակութային, տնտեսական և սոցիալական գործընթացների որոշակի զարգացման պայմաններում հակամարտող կողմերը չեն ցանկանում խելամտորեն համադրել իրենց շահերը, բնակչության մեծ մասի մարգինալացում է տեղի ունենում, իշխանական կառույցներում աճում է կոռուպցիան և այլն: Այս իրավիճակում թե՛ իշխանությունները, թե՛ քաղաքական ուժերը և թե՛ ֆինանսաարդյունաբերական խմբերը, սուր և անպտուղ առճակատման փոխարեն, պետք է ըմբռնումով վերաբերվեն գոյություն ունեցող կենսական իրողություններին, ուշադրություն դարձնեն հասարակության կարիքներին, իրենց ազդեցությունն օգտագործեն ի շահ հասարակության մեջ հակամարտության հետագա աճի կասեցման:

Հարկ է նշել, որ ներքաղաքացիական հակամարտության լուծումը շատ բանով կախված է այս կամ այն պետության իշխանությունների գրաված դիրքից ու գործողություններից: Հենց իշխանությունը, որի ձեռքերում են գտնվում քաղաքական և կառավարչական որոշումների կայացման համապատասխան օրենսդրական իրավասություններն ու կառավարման լծակները, կարող է վերացնել կամ զգալիորեն նվազեցնել սոցիալական լարվածությունը, վերևից իրականացվող բարեփոխումների և որոշակի զիջումների միջոցով հարթել կոնֆլիկտային իրավիճակը:

Դեկտեմբեր, 2004թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Кейси У.,* «Рекрутация терроризма», М., 2000, с. 44.
2. Советская историческая энциклопедия под ред. Е.Жукова в 16 томах, М., том 9, с. 106.
3. *Мильштейн П.,* «Левацкая болезнь в современном мире», http//www.grani.ru, March 21. 2004.
4. Энциклопедия «Всемирная история» в 10 томах, под ред. Ю.Францева, М., 1955-1965.
5. *Уодвелл А.,* «Советская империя и терроризм», М., 2002, с. 82.
6. *Гуров А.,* «Красная мафия», М., 1996.
7. *Бринлоу Г.,* «Недовоевавшие воины в современном обществе», СПб, 2001.
8. *Изард К.,* «Эмоциональное лицо терроризма », СПб, 2000, с. 95-97.
9. *Ирвин Т.,* «Политика и религия», Петрозаводск, 1997.
10. *Леруа Дж.*, «Ислам и терроризм: вера или политика», Бонн, Русская научная библиотека имени Мамонтова, 2003, с. 151.
11. Доклад Дж. Фризби «Современное состояние терроризма», http//www.antiter.org
12. *Антонян Ю.,* «Терроризм - криминалогическое и психологическое исследование», М., 1998, с. 84.
13. *Удилов В.,* «Кое-что о терроризме», М., 1998.
14. *Лоуренс У.,* «Деструктивные проявления в условиях современного развития человечества», М., 1995, с. 184.

О НАУЧНОЙ КЛАССИФИКАЦИИ ТЕРРОРИЗМА

Артак Закарян

Резюме

В статье рассматривается актуальное для человечества во все времена явление - терроризм. Предпринята попытка классифицировать это понятие, показать различие и схожесть идеологической основы разных видов терроризма, а также причины их возникновения и возможные тенденции развития. В работе отмечается, что борьба против терроризма должна вестись не по пути ликвидации его последствий, что неэффективно и не может предотвратить новых проявлений терроризма, а необходимо попытаться понять причины возникновения этого явления, то есть те умонастроения и идеологию, которые лежат в основе того или иного вида терроризма, что позволит уничтожить его источники.